ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
Գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7, Հեռ. (0256) 2-14-75, loriberd.lori@mta.gov.am

N 811
06 դեկտեմբեր 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2019թ. թիվ 236-Ա, 237-Ա և 238-Ա որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութեր:

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կատ.՝ Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա. Մարտիրոսյան
Հեռ.՝ (0256)21475

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» դեկտեմբերի 2019թ. № 236-Ա

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0011-0015 ԵՎ 06-044-0011-0001-007 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԹԻՎ 2 ՍԵՆՅԱԿՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԻՋՆՈՐՄԻ, ՄԻՋՆՈՐՄՈՒՄ ԲԱՑՎԱԾ ԴՌԱՆ ԲԱՑՎԱԾՔԻ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Կիմիկ Աղվանի Սերոբյանի և Հասմիկ Վոլոդյայի Սերոբյանի կողմից համատեղ ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի՝ 06-044-0011-0015 ծածկագրի Թումանյան փողոց թիվ 1 հասցեի և 06-044-0011-0001-007 կադաստրային ծածկագրի հողամասրի միավորման արդյունքում առաջացած միավորի մակերեսը ճշտելու, հողամասի վրա ինքնակամ կառույցված պարիսպները և բնակելի տան 1-ին հարկում կատարված միջնորմի և միջնորմում բացված դռան բացվածքը օրինականացնելու խնդրանքը, 27.03.2006թ. N 2141921 և 22.09.2008թ. N 2539280 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականները, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, 17.04.1986թ. N 263612 ամուսնության վկայականը, նկատի ունենալով այն հանգամանքները՝ որ հողամասում կառուցված պարիպների և բնակելի տան 1-ին հարկում կատարված ձևափոխումների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքվ պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ դրանք կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և այն փաստը, որ թիվ 2539280 սեփականության իրավունքի

վկայականով պետական գրանցում ստացած 0.165 հա բնակելի կառուցապատման հողամասը ձեռք է բերվել Կիմիկ Աղվանի Սերոբյանի և Հասմիկ Վոլոդյայի Սերոբյանի համատեղ կյանքում և «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» 201-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Միավորել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ.Լոռի Բերդ Թումանյան փողոց թիվ 1 հասցեի 06-044-0011-0015 ծածկագրի և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գ.Լոռի Բերդ հասցեի 06-044-0011-0001-007 ծածկագրի անշարժ գույքերը, հաստատել միավորված հողամասի մակերեսի չափը՝ 0.36995 հա համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ» ԱՁ-ի կողմից կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծի և ճանաչել միավորված անշարժ գույքի նկատմամբ՝ Կիմիկ Աղվանի Սերոբյանի և Հասմիկ Վոլոդյայի Սերոբյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Հաստատել միավորված անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Լոռի Բերբ Լոռի Բերդ գյուղ Թումանյան փողոց թիվ 1 բնակելի տուն:
3. Օրինականացնել՝ Կիմիկ Աղվանի Սերոբյանին և Հասմիկ Վոլոդյայի Սերոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.36995 հա հողամասի վրա 2007թ. ինքնակամ կառուցված՝ 13.59 քմ ընդհանուր մակերեսով պարիսպները, բնակելի տան առաջին հարկի թիվ 2 սենյակում ինքնակամ կառուցված մեկ միավոր միջնորմը և միջնորմում բացված մեկ միավոր դռան բացվածքը:
4. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 13.59 քմ ընդհանուր մակերեսով պարիսպների համար 4485.0 /չորս հազար չորս հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ, բնակելի տան առաջին հարկի թիվ 2 սենյակում ինքնակամ կառուցված մեկ միավոր միջնորմը և միջնորմում բացված մեկ միավոր դռան բացվածքի համար 1100.0 /մեկ հազար մեկ հարյուր/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների և ձևափոխությունների օրինականացման վճարի ընդհանուր չափը կազմում է՝ 5585.0 /հինգ հազար հինգ հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001324 հաշվեհամարին:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6. Կիմիկ Աղվանի Սերոբյանի և Հասմիկ Վոլոդյայի Սերոբյանի կողմից՝ 2007 թվականին, համաձայն 27.03.2006թ. թիվ 2141921 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականի պետական գրանցում ստացած 24.0 քմ մակերեսով թիվ 3 տնտեսական սենյակը օգտագործման ոչ պիտանի լինելու պատճառով ապամոնտաժվել է:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Է. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

կ.տ

2019թ. դեկտեմբերի 05
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » դեկտեմբերի 2019թ. № 237-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-025-0006-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.146 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ԵՎ 06-025-0006-0001-0001 ԾԱԿԱԳՐՈՎ 108.7 Ք/Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի 06-025-0006-0001 ծածկագրով 0.146 հա մակերեսով տնամերձին և 06-025-0006-0001-0001 ծածկագրով 108.7 ք/մ մակերեսով բնակելի տանը տրամադրել՝ գ. Բովաձոր, 2 – րդ փող., տուն 2 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Է.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

Կ.տ

2019թ. դեկտեմբերի 05
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 06 » դեկտեմբերի 2019թ. № 238-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-009-037-017 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.163 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ԵՎ 06-009-037-017-001 ԾԱԿԱԳՐՈՎ 148.3 Ք/Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-037-017 ծածկագրով 0.163 հա մակերեսով տնամերձին և 06-009-037-017-001 ծածկագրով 148.3 ք/մ մակերեսով բնակելի տանը տրամադրել ՝ գ. Ագարակ, 16– րդ փող., տուն 22 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Է.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կ.տ

2019թ. դեկտեմբերի 06
գ. Լոռի Բերդ